ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ<< ԳԵՂԱՇԵՆԻ ՌԱԶՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ

01.12.2023թ.

<<ՖՈՏՈՆ >>ՍՊԸ-ի տնօրեն Ն. Պետրոսյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ Կոտայքի մարզի<< Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի և <<ՖՈՏՈՆ >>ՍՊԸ-ի միջև 31.08 . 2023թ. կնքված N ԿՄԳՌՍԱՄԴ-ԳՀԱՊՁԲ-2023/01 դպրոցական սննդի մատակարարման պետական գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետն է ս/թ. դեկտեմբերի 20-ը:

Մինչև նոյեմբերի 20-ը <<ՖՈՏՈՆ>>ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ժամանակին և բարեխիղճ:

Նոյեմբերի 20-ին պատվեր է տրվել, և մատակարարը չի բերել նշված ապրանքը:Համաձայն պայմանագրի 2.1.1կետի ,եթե մատակարարը սահմանված ժամկետում չի մատակարարում ապրանքը և խախտում է մատակարարման ժամկետը,պատվիրատուն միակողմանի խզում է պայմանագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կոտայքի մարզի<< Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է Կոտայքի մարզի << Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի և <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ի միջև 2023թ. Օգոստոսի 31-ին կնքված ԿՄԳՌՍԱՄԴ-ԳՀԱՊՁԲ-2023/01 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված ,Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը պատվիրատուի կողմից պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

,Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և

մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Գնումների մասինե օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն, <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ –ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազորված մարմին:

ՏՆՕՐԵՆ՝ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ